ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
«ԲԵՐԴԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
07806692

հեռ. /0267/ 2-14-02 Ֆաքս ,fax /0267/ 2-14-02 E-mail: berdmedikal@yandex.com
ՀՀ Տավուշի մարզ ք.Բերդ Ա.Մանուկյան 25

12 օգոստոսի 2024թ. N 322

«Ագաստ» ՍՊԸ (ՀՎՀՀ՝ 00435781)
հասցե՝ ք. Երևան, Տ. Պետրոսյան 31/1

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը միակողմանի լուծման մասին

«Բերդի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության (այսուհետև՝ Գնորդ) և «Ագաստ» ՍՊ ընկերության (այսուհետև՝ Վաճառող) միջև 21.02.2024թ.-ին կնքված «ԲԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/02-3» ծածկագրով դեղորայքի մատակարարման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:» :

Պայմանագրի 2.1.7 կետով սահմանված է, որ Գնորդն իրավուն ունի «Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,...»:

Պայմանագրի Հավելված 1 -ով Ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանված 5 աշխատանքային օր:

22.07.2024թ.-ին Գնորդի կողմից էլեկտրոնային փոստով Վաճառողին 20-րդ (Անալգին 50% 2մլ) և 25-րդ (Ասկորբինաթթու, 50մգ/մլ, 2մլ) չափաբաժինների մատակարարման պատվեր է ուղարկվել , որը մինչ օրս չի կատարվել :

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի 526-Ն որոշման 33-րդ կետի 17-րդ ենթակետը, ինչպես նաև Պայմանագրի 8.11 կետը՝ «Բերդի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունը 2024թ. օգոստոսի 12-ին միակողմանի ամբողջությամբ լուծում է նշված պայմանագիրը՝ 20-րդ և 25-րդ չափաբաժինների մասով:

Միևնույն ժամանակ հայտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում եմ, որ պայմանագրի կատարման և որակավորման ապահովման գումարները կազմում են համապատասխանաբար՝ 59420 (հիսունինը հազար չորս հարյուր քսան) և 89130 (ութսունինը հազար մեկ հարյուր երեսուն) ՀՀ դրամ, որոնք անհրաժեշտ է վճարել «Բերդի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության «Արդշինբանկ» ՓԲԸ «Տավուշ» մասնաճյուղում բացված 2477800186580010 հաշվեհամարին:

Տեղեկացնում եմ, որ եթե մինչև 2024թ. օգոստոսի 21-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի պայմանագրի կատարման և որակավորման ապահովման գումարները, ապա «Բերդի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունը «Ագաստ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնի լիազորված մարմին:

Հիմք ընդունելով «Բերդի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության և «Ագաստ» ՍՊ ընկերության միչև 21.02.2024թ. կնքված ԲԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/02-3 ծածկագրով պայմանագրի 8.3 կետի պահանջները՝ տեղեկացնում եմ, որ այդ պայմանագրով ձեռք բերվելիք ապրանքները «Բերդի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության կողմից գնելու դեպքում «Ագաստ» ՍՊ ընկերությունը պարտավոր է փոխհատուցել գնային տարբերությունը՝ եթե նոր պայմանագիրը կնքվում է ավելի բարձր արժեքով, որի վերաբերյալ Ձեզ լրացուցիչ կծանուցվի:

Հարգանքով՝
տնօրեն Ա. Մարդանյան